ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ

«12» դեկտեմբերի 2023թ. ՆՄՈ/782-Ա

ք. Արմավիր

ԳՈՒՅՔԻ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ ԿՆՔԵԼՈՒ ՀԱՄԱՐ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տարածքային կառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասով, «Բաժնետիրական ընկերությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 67-րդ հոդվածի 1-ին մասի 26-րդ կետով, ՀՀ Վարչապետի 2022 թվականի դեկտեմբերի 29-ի N1550-Լ որոշման 1-ին կետի 3-րդ ենթակետով հաստատված N3 հավելվածի 7-րդ կետով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի 2023 թվականի օգոստոսի 14-ի N01/15/05689-2023 գրությունը.

որոշում եմ՝

1. Թույլատրել «Էջմիածնի բժշկական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերությանը Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման ազգային կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության «Արմավիր» մասնաճյուղի հետ «Էջմիածնի բժշկական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերությանը սեփականության իրավունքով պատկանող ինֆեկցիոն բաժանմունքի մասնաշենքից 80 քմ տարածքի համար կնքելու գույքի անհատույց օգտագործման պայմանագիր՝

պայմանով՝ ժամանակավորապես մինչև Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման ազգային կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության «Արմավիր» մասնաճյուղի շենքի վերակառուցման շինարարական աշխատանքների ավարտը՝ 18 ամիս ժամկետով:

2. Սահմանել, որ պայմանագրի նոտարական վավերացման և պայմանագրից բխող գույքային իրավունքների պետական գրանցման ծախսերը ենթակա են իրականացման Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման ազգային կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության «Արմավիր» մասնաճյուղի միջոցների հաշվին:
3. «Էջմիածնի բժշկական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության տնօրենին (Գ. Ասատրյան)՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 685-699-րդ հոդվածներով սահմանված կարգով իրականացնել սույն որոշումից բխող գործառույթներ:
4. Սույն որոշման կատարման հսկողությունը վերապահել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի խորհրդական Ս. Թովմասյանին:
5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՄԱՐԶՊԵՏ՝ Է. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

Недействительная подпись

ԷԴՎԱՐԴ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

Подписано: HOVHANNISYAN EDVARD 20018305